Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՄՇԱԿՈՒՅԹԻ ՈԼՈՐՏ
2018թ.

ՀՀ Լոռու մարզում մշակութային քաղաքականության իրականացման և ապահովման նպատակով կազմակերպվում են պետական, ազգային և այլ տոների, հիշատակի օրերի հետ կապված զանգվածային միջոցառումներ:

Ստորև ներկայացվում է կազմակերպված և անցկացված միջոցառումների վերաբերյալ հաշվետվությունը.

Ամանորյա և Սուրբ ծննդյան օրվան նվիրված հանդիսությունների կազմակերպում և անցկացում:

- Ամանորին նվիրված թատերականացված ներկայացումներ են կազմակերպվել Վանաձորի «Հայքի» հրապարակում, Հովի.Աբելյանի անվան պետական դրամատիկական թատրոնում, Վանաձորի քաղաքապետարանի Տիկնիկային և «Բոհեմ» կամերային թատրոնում, Գուսան Զաքարյանի անվան մշակույթի տանը և այլ թատերականացված խմբերի ելույթներ մշակութային տարբեր հաստատություններում:

Նմանատիպ հանդիսություններ են կայացել մարզի այլ համայնքներում: Մասնավորապես Ալավերդի, Սպիտակ, Ստեփանավան, Տաշիր և այլ:

- **Հայոց բանակի կազմավորման 26- ամյակ**ին նվիրված միջոցառումների սկիզբը հունվարի 28-ին ազդարարվեց Վանաձորի զինվորական պանթեոն այցով: Մարզային ու քաղաքային իշխանության ներկայացուցիչներ, ազատամարտիկներ, բարեկամներ, ինչպես նաև քաղաքացիներ իրենց խոնարհումը բերեցին Արցախյան ազատամարտում նահատակված հերոսների հիշատակին: Կատարվեց հոգեհանգստի կարգ: Ծաղկեպսակներ խոնարհվեցին նաև Վազգեն Սարգսյանի կիսանդրու առջև:

  Բազմաբնույթ հանդիսություններ են կազմակերպվել մարզի կրթական հաստատություններում, մշակույթի ակումբներում, գրադարաններում:

- Գուգարաց թեմի հետ համատեղ մեծ հանդիսությամբ նշվել է Սուրբ Սարգիս Զորավարի և երիտասարդների օրհնության տոնը:
-
- **Հայոց ցեղասպանության անմեղ զոհերի 103-րդ տարելիցի ոգկոչման մարզային միջոցառումներ. Այդ թվում.՝**

Հայ Առաքելական Եկեղեցու Գուգարաց թեմի Սուրբ Գրիգոր Նարեկացի եկեղեցում և թեմի բոլոր եկեղեցիներում Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված Սուրբ Պատարագի և հոգեհանգստի արարողություններ, երիտասարդական քայլերթեր:

Կազմակերպվել է մոմավառություն՝ Ծաղիկների և ծաղկեպսակների խոնարհում խաչքարին:

Մարզի բոլոր հանրակրթական դպրոցներում կազմակերպվել են գրական-երաժշտական ցերեկույթներ, հուշ-երեկոներ, բաց դասեր. (նվիրված Մեծ Եղեռնի զոհ դարձած հայ գրողներին), քաղաքական և հասարակական անվանի գործիչների հետ հանդիպումներ:

Կազմակերպվել են Մայիսյան տոներին նվիրված բազմաթիվ միջոցառումներ: Այդ թվում.

Հանրապետության տոնը և Ղարաքիլիսայի հերոսամարտի 100-րդ տարեդարձը: Ավանդույթի համաձայն՝ տոնական միջոցառումը կազմակերպվել էր Ղարաքիլիսայի ճակատամարտի վայրում՝ «Կոտրած եկեղեցի» հուշակոթողի մոտ:

Մայիսի 9-ին մարզկենտրոն Վանաձորում մեծ շուքով նշվեց Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի 73-ամյակը և Շուշիի ազատագրման 26-րդ տարեդարձը: Հայրենական մեծ պատերազմի զոհերի հիշատակին կառուցված հուշակոթողի մոտ, ուր առավոտից հնչում էր տոնական երաժշտություն, հավաքվել էր հոծ բազմություն:

ՀՀ Անկախության 27-ամյա հոբելյանին և Սահմանադրության օրվան նվիրված հանդիսություններ և տոնական համերգներ են կազմակերպվել մարզի համայնքներում, մասնակցությամբ մարզի լավագույն համույթների և անհատ կատարողների:

Մարզի վաստակաշատ կանանց շնորհավորելու նպատակով այս տարի նույնպես կանանց տոնին նվիրված միջոցառում է կազմակերպվել մարզպետարանի դահլիճում : Կրթության, առողջապահության, տեղական ինքնակառավարման, ոստիկանության, դատախազության, ազգային անվտանգության, և այլ ոլորտների շուրջ 30 մտավորական կանանց շնորհավորել է Լոռու նախկին մարզպետ Ա. Նլբանդյանը, թեմի առաջնորդ Ս. Չուլջյանը և այլ պաշտոնատար անձինք:

«Մշակութային կրթության աջակցության հիմնադրամի» նախաձեռնությամբ հանրապետության մարզերի երաժշտական եւ արվեստի դպրոցների երիտասարդ մանկավարժների համար անց են կացվել վերապատրաստման դասընթացներ:

«Պետական աջակցություն մշակութային միջոցառումներին»

ծրագրի շրջանակներում կազմակերպվել են հետևյալ միջոցառում-հանդիսությունները.

ա/ «Պատանի երաժիշտ կատարողների» Լոռու մարզային մրցույթ-փառատոն

Փառատոնը կայացել է Վանաձորի Էդ. Կզարթմյանի անվան երաժշտական դպրոցում, մասնակցությամբ՝ մարզի քաղաքային և գյուղական համայնքների երաժշտական և արվեստի դպրոցների սովորող աշակերտների միջև: Մասնավորապես՝ Վանաձորի, Սպիտակի, Ստեփանավանի, Ալավերդու, Տաշիրի, Օձունի, Շնողի, Շիրակամուտ համայնքներից: Բոլոր մասնակիցները ՀՀ Լոռու մարզպետի կողմից պարգևատրվել են շնորհավորագրերով:

բ/ «Ազգային նվագարանների երգի-պարի, ասմունքի» ամենամյա Լոռու մարզային փառատոնը կայացել է Վանաձորի Շառլ Ազնավուրի մշակույթի պալատում մասնակցությամբ՝ մարզի քաղաքային և գյուղական համայնքներից շուրջ 13 մանկապատանեկան պարային համույթների, 27 անհատ կատարողների, մասնավորապես՝ Վանաձորի, Սպիտակի, Ստեփանավանի, Ալավերդու, Տաշիրի, Սարչապետի, Օձունի, Մեծավան, Շնող և այլ համայնքներից: Բոլոր մասնակիցները ՀՀ Լոռու մարզպետի կողմից պարգևատրվել են շնորհավորագրերով և հուշանվերներով:

գ/ Ղարաքիլիսայի հերոսամարտի 100-րդ տարելիցին նվիրված հանդիսության փոխարեն կազմակերպվել է «Գնահատանքի» ցերեկույթ, որտեղ հրավիրված են եղել ՀՀ Լոռու մարզի արվեստագետներ, անհատ կատարողներ և ստեղծագործողներ, լրագրության ոլորտի անվանի աշխատողներ:

դ/ « Լոռի-Արցախ մշակույթի օր » խորագիրը կրող միջոցառման փոխարեն իրականացվել է Մարտակերտից թվով 35 երեխաների ակտիվ հանգստի կազմակերպումը Վանաձորի «Ծիծեռնակ» ճամբարում:

ե/ Հայկական Ավանդական ծիսակատարություններին, ավանդույթներին նվիրված հանդիսություն «Վարդավառ», «Խաղօղ օրհնեք», «Խաչվերաց տոն»: Կազմակերպվել է ՀՀ Լոռու մարզի Օձուն համայնքի Սբ. Աստվածածին եկեղեցու բակում, որտեղ մասնակցել ել մարզի պարային համույթներ, անհատ կատարողներ, թատերականացված ելույթներ:

Այլ միջոցառումների թվում՝

- «ԹԱՏԵՐԱԿԱՆ ԼՈՌԻ 24» Փառատոնի կազմակերպումը Ալավերդի համայնքում:
- «Մշակութային և ինտելեկտուալ զարգացման» խմբակի ստեղծումը, Վանաձորի Գուսան Զաքարյանի անվան մշակույթի տանը:
- «ՊԱՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱՆ ՆՎԻՐՎԱԾ» համերգ-հանդիսություններ:
- ԱՀ «ՄԵՆՔ ԵՆՔ ՄԵՐ ՍԱՐԵՐԸ» երգի-պարի պետական համույթի համերգները Վանաձոր, Սպիտակ, Ալավերդի, Ստեփանավան և այլ համայնքներում:
- «ՖՐԱՆԿԱՖՈՆԻԱՅԻ ՕՐԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ» ծրագրի շրջանակներում բազմաթիվ միջոցառում-հանդիսություններ մշակութային կառույցներում:

Վանաձորի Սբ. Գրիգոր Նարեկացի եկեղեցու սրահ:

- Եվրոպական ժառանգության օրերը հայաստանում» մի շարք միջոցառումներ մշակութային հաստատություններում՝ համերգասրահներում:
- «Երգչախմբային արվեստի» միջազգային օրվան նվիրված հանդիսություն, մասնակցությամբ մարզում գործող երգչախմբերի:
- 1988թ. երկրաշարժի անմեղ զոհերի հիշատակի ոգեկոչման գրական-երաժշտական միջոցառումներ:
- Եվ այլ տարաբնույթ միջոցառումներ
- Վաստակավոր կոլեկտիվ, Հայաստանի Ազգային Ակադեմիական Երգչախմբի համերգը-պատարագը մաեստրո Հ. Չեքիջյանի ղեկավարությամբ:

Լոռու մարզային գրադարանում

- Գրադարանի ամերիկյան կենտրոնում տեղի է ունեցել ցերեկույթ՝ նվիրված արձակագիր, դրամատուրգ, ՀՀ պետական մրցանակի դափնեկիր Գուրգեն Խանջյանին:
- Ինքնուս ստեղծագործողներ Երիտասարդ հաշմանդամների ձեռքի աշխատանքների ցուցահանդես վաճառք:
- «Ազգային գրադարանային շաբաթ» ծրագրի շրջանակներում.

ա/ «Աշխարհի գրադարանները» դասախոսություն
բ/ Հանդիպում գրողներ Մ. Միկոյանի, Խ. Գասպարյանի, ժող. վարպետ Մ. Սարգսյանի հետ:
գ/ Արտավազդ Փելեշյան – 80.....
Եվ այլ բազմաթիվ տարաբնույթ միջոցառումներ:

Վանաձորի Հ. Իգիթյանի անվ. գեղագիտության ազգային կենտրոն.

- «Գարուն» խորագրով, Ալլա Գրիգորյանի նկարչական աշխատանքների ցուցահանդես
- Երիտասարդ նկարիչներ՝ Համլետ Հակոբյանի և Սենիկ Մանուկյանի գեղանկարչական աշխատանքմերի ցուցահանդես, նվիրված Մայրության և Գեղեցկության տոնին:
- «Բաց դռների օր» նվիրված երեխաների պաշտպանության օրվան:
- Հուշ-երեկո, նվիրված բանաստեղծ կարեն Առաքելյանին:
- Եվ այլ բազմաթիվ ցուցահանդես- միջոցառումներ:

Ստ. Զորյանի տուն թանգարան.

- Հանդիսություն, նվիրված Հայոց բանակի ստեղծման 26- ամյակին, մասնակցությամբ Վանաձորի թիվ 10 ավագ դպրոցի աշակերտների, մակավարժների,N զորամասի զինվորների, երկրապահ կամավորների միության ներկայացուցիչների միջև:
- Հանդիսության, նվիրված Զորյանի ծննդյան 129-ամյակին
- Սարգիս Գոքորյանի «Առանց նախապայմանների» գրքի շնորհանդես:
- Հանդիսություն, նվիրված Պոեզիայի միջազգային օրվան:
- Հանդիսություն, նվիրված մանկագիր Լիպարիտ Սարգսյանի ծննդյան 80-ամյակին:
- «Թանգարանների գիշեր» միջոցառումների կազմակերպում և անցկացում:
- Տուն-թանգարանի հյուրընկալ հարկի տակ ավանդաբար նշվող տոներից է Ամենայն հայոց բանաստեղծի ծննդյան օրը, որը վերիջին տարիներին արժևորվում է նաև որպես Գիրք նվիրելու օր: Այս անգամ կազմակերպված միջոցառումը կրում էր **«Իմ Թումանյանը»** խորագիրը և նվիրված էր մեծն լոռեցու ծննդյան 149-ամյակին ու Մայրենի լեզվի օրվան:
- Հերմինե Զարմանյանի «Ստվերի սիրտը» գրքի շնորհանդեսի կազմակերպում

Վանաձորի Կ.Աբովյանի անվան կերպարվեստի թանգարան:

- Լոռու արվեստագետների ստեղծագործությունների «**ԲԱԶՄԱԾԱՎԻՂ** վանաձորյան ներկապնակ» խորագրով ցուցահանդեսը:
- Մայրության և Գեղեցկության տոնին նվիրված «**ՀԱՎԵՐԺԻ ԳՐԱՎԱԿԱՆԸ**» խորագիրը կրող ցուցահանդես:
- «Հաղթանակի գույնը» ցուցահանդես, նվիրված Ղարաքիլիսայի հերոսամարտի 100-ամյակին:
- Գեղանկարիչ Արմեն Լոռենցի «Լոռի իմ սեր, իմ թախիծ» խորագիրը կրող ցուցահանդեսը:
- Եվ այլ բազմաբնույթ միջոցառումներ

Վանաձորի Հովի. Աբելյանի անվան պետական դրամատիկական թատրոն:

- Արթուր Պապիկյանի 50. Ջիվան Սարգսյանի 60, Հրաչյա Սարուխանյանի 70 հոբելյանական երեկոների կազմակերպումը:
- Էլֆիկ Զոհրաբյանի «Բյուրեղապակե մարդը» հեքիաթների գրքի շնորհանդեսը

Եվ այլ հանդիսություններ...:

Վանաձորի Էդ. Կզարթմյանի անվան երաժշտական դպրոց:

- Հայ պոեզիայի և ասմունքի համաքաղաքային մանկապատանեկան 25-րդ փառատոնի եզրափակիչ հանդիսություն:
- Կոմիտաս միջազգային երաժշտական փառատոնի շրջանակներում Ֆրանսիայի «Ճամփորդող երգչախումբ» և «Հայաստանի փոքրիկ երգիչներ» երգչախմբերի համերգը:
- Վանաձորի ուկրաինական համայնքի «Վերբիչենկո» երգչախմբի ստեղման 20-ամյակին նվիրված համերգ-հանդիսություն
- Հաղպատի «Քեֆելյան» համալիրում կայացել է հանդիսություն, նվիրված երջանկահիշատակ արձակագիր Ֆելիքս Շաքարյանի ծննդյան 79 – ամյակին: Այդ օրը տեղի ունեցավ նաև գրողի անվան «Տարվա լավագույն պատմվածք» գրական մրցանակաբաշխության ամփոփումը:
- Ռոբերտ Ամիրխանյանի հեղինակային համերգը նվիրված «Աղուհացի»տոնին:
- Արամ Խաչատրյանի ծննդյան 115-ամյակին նվիրված հանդիսություն:

«Ազգային Գրադարանային Շաբաթ» ծրագրի շրջանակներում Լոռու մարզային գրադարանում և մարզի շուրջ 47 գրադարաններում կազմակերպվել են բազմաթիվ միջոցառումներ, գրական-երաժշտական ցերեկույթներ, որոնք անցել են պատշաճ մակարդակով:

«Թանգարանային գիշեր» խորագիրը կրող միջոցառումներ են կազմակերպվել մարզում գործող բոլոր թանգարաններում:

Երեխաների պաշտպանության օրվան նվիրված բազմաթիվ միջոցառումներ են կազմակերպվել մարզի համայնքներում: Մասնավորապես՝ Վանաձորի Հայքի հրապարակում կավճանկարի մրցույթ, Գեղագիտության ազգային կենտրոնի և գեղարվեստի դպրոցի ցուցասրահներում սաների ստեղծագործությունների ցուցադրություն, մանկական- թատերական ներկայացումներ մշակույթի տներում և ակումբներում:

Ուսուցիչների միջազգային օրն այն եզակի տոներից է, որն առանձնակի երախտագիտությամբ է նշում յուրաքանչյուր քաղաքացի՝ սիրով հիշելով, իր մանկավարժներին, իր առաջին ուսուցչին: Այն շնորհակալական խոսքեր հնչեցնելու ևս մեկ հրաշալի ու սպասված առիթ է: Տոնը երբևէ չի անտեսվում նաև մարզային իշխանությունների կողմից:

Ղարաբաղյան ազատամարտում ընկած զինվորների հուշաքարի մոտ կազմակերպվել է **Անհայտ Կորած Ազատամարտիկների** օրվան նվիրված միջոցառում, որտեղ իրենց մասնակցությունն էին բերել անհայտ կորած զինվորների հարազատներ, պետական և հոգևոր այրեր, վետերաններ, ազատամարտիկներ, մտավորականներ, ուսանողներ: Կատարվել է Ծաղկեպսակների և ծաղիկների խոնարհում: Անհայտ կորած զինվորների հարազատներին Լոռու մարզպետի կողմից հատկացվել է դրամական օգնություն:

Միջոցառումը շարունակվել է Վանաձորի գեղագիտության ազգային կենտրոնում, որտեղ հանդես են եկել աստունքողներ և անհատ երաժիշտ-կատարողներ:

«Բերքի Տոն-2018» տոնահանդեսի կազմակերպումը Վանաձորի Հայքի հրապարակում: Տոնակատարությունը համախմբել էր մարզի համայնքների հարյուրավոր բնակիչների, հյուրերի հանրապետության տարբեր մարզերից, մայրաքաղաքից ԱՀ-ից և արտերկրից: Մարզի տասնյակ համայնքներ, ձեռնարկատերեր ու անհատ ձեռներեցներ, հասարակական կազմակերպություններ պատրաստել էին ճոխ ու ինքնատիպ ձևավորված տաղավարներ, ուր ներկայացված էին տարվա ընթացքում արտադրված բազմազան բերքն ու բարիքը, լոռվա ավանդական խոհանոցն ու Լոռու կենցաղին բնորոշ կիրառական իրերը, ձեռքի աշխատանքներ:
Համերգային ծրագրում ընդգրկվել են մարզի մանկապատանեկան պարային համույթներ, անհատ կատարողներ, մարզական ցուցադրական ելույթներ:

Ախթալա համայնքում Կազմակերպվել է ավանդույթ դարձած **«Խորովածի տոն 2018» մրցույթ-փառատոնը**:Հանդիսությանը մասնակցել են մարզի լավագույն համերգային կոլեկտիվներ և անհատ կատարողներ:

«Թումանյանական հեքիաթի օր» տիկնիկային թատրոնների **13-րդ** միջազգային փառատոնի կազմակերպումը մարզի համայնքներում որտեղ ներկայացումներով հանդես են եկել հանրապետության և մի շարք արտասահմանյան երկրների տիկնիկային թատրոններ:

Ավանդույթ են դարձել Լոռու մարզի հետ բարեկամության խոր արմատներ ձգած ԱՀ Մարտակերտի վարչական շրջանի դպրոցականների այցելությունները Լոռի, որտեղ բնության գրկում գտնվող «Ծիծեռնակ» և «Գուգարք» ճամբարներում նրանք հանգստանում են, կազդուրվում, բարեկամանում տեղի երեխաների հետ, էքսկուրսիաների շնորհիվ հաղորդակից դառնում մայր հայրենիքի պատմաճարտարապետական արժեքներին, այցելում թանգարաններ, պատմական վայրեր:

Հիշատակի տուրք է մատուցվել 1988 թ. արհավիրքի զոհերին: Լոռու մարզի Հայ Առաքելական եկեղեցիներում կատարվեց հոգեհանգստի կարգ: Վանաձորի Սուրբ Աստվածածին եկեղեցու Նահատակաց պուրակում հոգեհանգստյան աղոթք հնչեցվեց թեմակալ առաջնորդ Սեպուհ արքեպիսկոպոս Չուլջյանի հանդիսապետությամբ, որից հետո երկրաշարժի զոհերի հիշատակը հավերժացնող հուշակոթող-խաչքարին ներկաները՝ Վարչապետի պաշտոնակատար Նիկոլ Փաշինյանը, Լոռու մարզպետ Անդրեյ Ղուկասյանը, Վանաձորի քաղաքապետ Մամիկոն Ասլանյանը, մարզային և քաղաքային իշխանությունների, ավագանու, մտավորականների ու հոգևոր դասի ներկայացուցիչները, բազմաթիվ քաղաքացիներ ծաղիկներ ու ծաղկեպսակներ խոնարհեցին: Հուշակոթողին ծաղկեպսակներ էին դրվել նաև ՀՀ նախագահի և ՀՀ կառավարության կողմից:

ՀՀ Լոռու մարզում 2018թ. ընթացքում իրականացված միջոցառումների մասին

h/h	Ազգային պետական տոներ	Հիշատակի օրեր	Հոբելյանական ծննդյան	Ավանդական տոներ	Այլ միջոցառումներ	Ծանոթություն

			տարեթվեր			
1.	**9.** **Այդ թվում** 1.Ամանորի և Սբ. ծննդյան 2. Բանակի օր 3.Կանանց տոն 4.Աշխատանքի օր 5.Հաղթ. և խաղաղության օր 6.Հանրապետ. օր 7.Սահմանադր. օր 8.Անկախության օր 9.Երկրապահի օր	**6.** **Այդ թվում՝** 1.Ցեղասպանության 2.Մեռելոցի օր 3.Բռնադատվածների 4.Երկրաշարժի 5.Անհայտ կորած ազատամարտիկների 6.Ադրբեջանում կազմակերպված ջարդեր 7. «Սուրբ Խաչի» տոն	**22** 1.Հ.Թումանյան 149 2.Կոմիտաս 149 3.Ա.Իսահակյան 143 4.Հ.Շիրազի 104 5.Պ Սևակ 94 6. Ս.Զորյան 129 7. Հ. Մաթևոսյան 83 8. Ա. Փելեշյան 80 10. Հ. Սարուխան 70 11. Չարենց 120 և այլ…	**9** **Այդ թվում՝** 1.Ծաղկի տոն 2.Թարգմանչաց տոն 3. «Վարդատոն» 4.Խաչվերաց տոն 5.«Խորովածի» տոն 6.Տիկնիկային թատրոնների 11-րդ միջզ.փառատոն 7.Ավանդական «Բերքի տոն2016» 8.«Պանրի տոն» 9.«Համբարձման»տոն	**85.** / Համերգ-հանդիսություններ, Գրական-երաժշտական ցերեկույթներ, Մրցույթ-փառատոներ պարի-երգի-ասմունքի,ժող. նվագարանների, Ցուցահանդես-վաճառք, Գրքի շնորհանդեսներ, թատերական ացված հանդիսություններ և այլ	**Ընդհանուր 142**

ՈԼՈՐՏԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

- Շենքային պայմանների բարելավում:
- Առավել նշանակալից պատմամշակութային հուշարձանների ընդգրկում զբոսաշրջության երթուղիներում:
- Մշակութային կառույցներում տեխնիկական սարքավորումների հագեցվածության ապահովում ժամանակակից միջոցներով:
- Մշակույթի ոլորտի աշխատողների սոցիալական վիճակի բարելավում և աշխատավարձի բարձրացում, մասնավորապես աշխատողների ընդգրկումը սոցիալական ապահովագրության փաթեթի մեջ:

Մշակույթի ոլորտում աշխատանքների հիմնական ուղղությունները

1. Ելնելով մշակույթի համաչափ զարգացման մասին ՀՀ կառավարության հիմնական գերակայություններից՝ կարևորվում է Լոռու մշակույթի ներկայացումը արցախահայությանը, ինչպես նաև հյուսիսային Հայաստանի և Արցախի ազգագրական, ծիսական առանձնահատկություններին երկկողմանի ծանոթությունը:
2. Մարզի դպրոցահասակ երեխաների էքսկուրսիաների կազմակերպում մարզի տարածքում գտնվում համաշխարհային մշակութային ժառանգություն հանդիսացող Հաղպատի ու Սանահինի հրաշակերտ վանական համալիրներ, առավել հայտնի Օձունի, Արդվու, Ախթալայի, Քոբայրի, Հնեվանքի, Սեդվու և այլ եկեղեցիներ:

3. Իրականացնել աշխատանքներ «Պետական աջակցություն մշակութային միջոցառումներին» ծրագրի շրջանակներում կազմակերպվող հանդիսություններին ընդգրկել ավելի շատ թվաքանակով համույթներ, անհատ կատարողներ:
4. Նպաստել դպրոցահասակ երեխաների պարբերաբար այցելությունները մարզում գործող թանգարաններ, մասնավորապես «Լոռի-փամբակ» երկրագիտական թանգարան, Վանաձորի Կերպարվեստի թանգարան, Ստեփան Զորյանի տուն-թանգարան, Դսեղում Հ. Թումանյանի տուն- թանգարան և այլ: